ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Աշոտ Մանուկյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Մոսկվա /Ռուսաստանի Դաշնություն/, 2018թ փետրվարի 28-ից մարտի 2-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցել Եվրասիական տնտեսական միության շրջանակներում էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձևավորման գործընթացի հետ կապված ԵԱՏՄ անդամ երկրների էներգետիկայի նախարարների մասնակցությամբ խորհրդակցությանը:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**

   ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման նպատակով չհամաձայնեցված հարցեր,

   ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման մասին միջազգային պայմանագրի նախագծի քննարկում,

   Էլեկտրաէներգետիկայի բնագավառում բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայություններին մուտքի միասնական կանոնների նախագծի քննարկում,

   Էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայում փոխադարձ առևտրի կանոնների նախագծի քննարկում,

   Էլեկտրաէներգիայի հաղորդման միջպետական գծերի զարգացման կարգի նախագծի քննարկում,

   Օրակարգային այլ հարցեր:

7. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Խորհրդակցության շրջանակներում նախարար Մանուկյանն առանձնազրույցներ է ունեցել Եվրասիական տնտեսական միության էներգետիկայի և ենթակառուցվածքների գծով Կոլեգիայի անդամ (նախարար) Էմիլ Կայկիևի, ՌԴ էներգետիկայի նախարարի տեղակալ Վյաչեսլավ Կրավչենկոյի, Ղրղզստանի արդյունաբերության, էներգետիկայի և

ընդերքօգտագործման պետական կոմիտեի նախագահ Ուլանբեկ Ռիսկուլովի հետ:

Բելառուսի էներգետիկայի նախարարի տեղակալ Վադիմ Զակրևսկու հետ առանձնազրույցի ընթացքում քննարկվել են էլեկտրաէներգետիկական և գազի միասնական շուկաների ձևավորման հիմնական խնդիրները, երկու երկրների կառավարությունների մոտեցումներն ու գնագոյացման մեխանիզմները:

8. ՀԱՎԱՔԻ ԿԱՄ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԹՂԹԵՐԸ

Շարունակել աշխատանքները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ, ԵԱՏՄ շրջանակներում էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձևավորման նպատակով անհրաժեշտ աշխատանքներն ավարտելու նպատակով:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների
նախարար Ա.Մանուկյան